Տարեկան ընդհանուր ժողով

17.01.2013 00:00

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի տարեկան

ընդհանուր ժողովի անցկացման վերաբերյալ

ՀՀ փաստաբանների պալատը հրավիրում է փաստաբաններին մասնակցելու Պալատի տարեկան ընդհանուր ժողովին, որն անցկացվելու է 2012թ. փետրվարի 11-ին ժամը 11:00-ին Հայաստանի Ամերիկյան համալսարանի նիստերի դահլիճում (հասցեն՝ ք.Երևան, Բաղրամյան պող. 40, 2-րդ հարկ) հետևյալ օրակարգով՝

1. Ժողովի անցկացման հետ կապված անհրաժեշտ կազմակերպչական հարցեր,

2. Ժողով վարելու կարգի հաստատում,

3. Պալատի կանոնադրության հաստատում,

4. Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հաստատում,

5. կարգապահական գործերը նախապատրաստող անձանց ընտրություն,

6. Պալատի Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի հաշվետվությունը 2010թ. մարտ-2011թ. ժամանակահատվածի համար:

Ժողովի մասնակիցների գրանցումը կատարվելու է 11.02.2012թ. ժամը 09:45-ից մինչև 10:55-ը:

Ժողովի մասնակցության գրանցման ժամանակ ստուգվելու է փաստաբանի անձը հաստատող փաստաթղթի առկայությունը:

Պալատի նախագահ՝ Ռուբեն Սահակյան

Հ.Գ. Միաժամանակ Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Պալատի կանոնադրության նախագիծը:

Նախագիծը վերջնականորեն դեռ խմբագրված չէ, ինչի համար հայցում ենք Ձեր ներողամտությունը: Սպասում ենք նախագծի վերաբերյալ Ձեր առաջարկություններին և դիտողություններին մինչև **փետրվարի 8-ը info@advocates.am** հասցեով**:**

Կանոնադրության նախագիծ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })